«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
ՀՀ, Երևան 0015, Գ. Լուսավորիչ 9
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

SPEEDTEST AWARDS 2017
ԱՄԵՆԱՐԱԳ ԷԼՓԱՅԱՆ ՑԱՆՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դիմումի համար

0220334

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան «31» մայիսի 2019թ.

«Յուքոմ» ՍՊ Ընկերությունը, ի դեմս ընկերության Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Ասատուրյանի, ով գործում է 06.03.2019թ.-ին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և «ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը» (այսուհետ՝ Հանձնաժողով), ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Աշոտ Վահանյանի, ով գործում է Հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին 31.05.2019թ.-ից լուծել 10.02.2017թ. կնքված «Հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման» թիվ 10/02/2017 պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր»):
2. Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին վճարել մինչև սույն համաձայնագրի ստորագրման պահը Օպերատորի կողմից փաստացի մատուցված ծառայությունների արժեքը՝ Օպերատորի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:
3. Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում են Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված այլ պարտականությունները, բացառությամբ Օպերատորի կողմից Բաժանորդին տրամադրված Սարքի (Սարքն օգտագործելու համար հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրեն փոխանցված կամ Սարքին միացված սարքավորումների, մալուխների, լարերի և այլ պարագաների) վերադարձման և/կամ դրա (դրանց) արժեքի փոխհատուցման պարտականության:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Օպերատոր	Բաժանորդ
«Յուքոմ» ՍՊ Ընկերություն	ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4	պետական հանձնաժողով
Գործ. հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9	Իր. հասցե՝ ք.Երևան, Միեր Մկրտչյան 5բ
Հեռ.՝ 374 11 400400	Գործ. հասցե՝ ք.Երևան, Միեր Մկրտչյան 5բ
Ֆաքս՝ 374 11 400401	Հեռ.՝ 010541900
ՀՎՀՀ 00024873	Էլ փոստ՝ info@competition.am
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 01538354
Հ/Հ 15700431021341 00	
Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝	Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝
_____ Կ. Ասատուրյան	_____ Ա. Վահանյան